ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N-----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ «ՆՌԱՆ ԳՈՒՅՆԸ» ՖԻԼՄԻ ԱՆՎԱՄԲ ՊՈՒՐԱԿ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հավելվածի 18-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Երևանի կինոյի տան դիմացի /Վարդանանց փող.,18շ./ դիմացի պուրակն անվանակոչել Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի անվամբ՝ «Նռան գույնը» պուրակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ «ՆՌԱՆ ԳՈՒՅՆԸ» ՖԻԼՄԻ ԱՆՎԱՄԲ ՊՈՒՐԱԿ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Երևանի կինոյի տան դիմացի /Վարդանանց փող.,18շ./ դիմացի պուրակն անվանակոչել Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի անվամբ՝ «Նռան գույնը» պուրակ:

Սերգեյ Փարաջանովի նշանավոր «Նռան գույնը» ֆիլմը թողարկվել է 1968թ. և նվիրված է Սայաթ-Նովային, հեղինակային անունը՝ «Սայաթ-Նովա»: Գրաքննության ճնշման տակ Փարաջանովն ստիպված էր լրիվ վերամոնտաժել և փոխել ֆիլմի անունը: Այն տարբերակը, որը ցուցադրվել է էկրաններին, Սերգեյ Յուտկևիչի իրականացրած ևս մի վերամոնտաժի արդյունքն է:

Ֆիլմը նկարահանվել է Լոռու մարզի Սանահինի և Հաղպատի նշանավոր վանքերում, ինչպես նաև Արդվի գյուղի մոտակայքում՝ Սրբանեսի (Սուրբ Հովհաննեսի կամ Հովհան Օձնեցու) վանքում: Մանրանկարներից բաղկացած ֆիլմը ներկայացնում է Սայաթ-Նովայի հոգևոր ներաշխարհը, նրա սիրո պատմությունը, վերաբերմունքը հավատքին, աշխարհիկ կյանքին, ժողովրդին:

«Նռան գույնը» կինոնկարում միավորված է «երեք ժամանակ»՝ ֆիլմի հերոսի՝ միջնադարյան հայ աշուղ Սայաթ-Նովայի ժամանակը, ֆիլմի հեղինակի՝ Փարաջանովի ապրած ժամանակը և հավերժական ժամանակը:

Նռան գույնը՝ փարաջանովյան «կինեմատոգրաֆիական գորգի» գերիշխող այդ գույնը, հայի ոչ այնքան կենցաղի, այլ առավելապես տրանսցենդենտ՝ անդրանցումային կեցության ծնունդ որդան կարմիրն է՝ հավերժությունից կորզված, իբրև կյանքի բանաձև ու նախատվյալ գտնված, սրբագործված գունային տեսանելի սուբստանցիան:

Ֆիլմի գեղագիտությունն այնպիսին է, որ գործողության՝ պատկերների ու տեսարանների մեծ մասը միաժամանակ դիտվում, ընկալվում է թե՛ կոնկրետ, թե՛ պայմանական, փոխաբերական հարթություններում: Այս վերացականությունը ձեռք է բերվում հատկապես եկեղեցական ծիսակարգի պայմանականության, ինչպես նաև՝ պոեզիային հատուկ սիմվոլների ու մետաֆորների օգտագործմամբ, թեև ոչ ընդունված իմաստով ու եղանակով: Փարաջանովը պարզապես պաշտում էր նուռը, այդ պտղի հանդեպ ինչ-որ գերբնական, միստիկ զգացմունք էր տածում՝ ասելով, որ «նռան մեջ սուտ չկա, նրա յուրաքանչյուր հատիկ լցված է կյանքով… Այս հատիկները փոքրիկ տոն էին, որ ես այդքան ուզում էի շաղ տալ բոլորի առաջ…»: Նուռը, որ հաճախակի է հանդիպում հին հայկական խաչքարերի, եկեղեցիների զարդաքանդակներում, որմնանկարներում, գորգերի զարդանախշերում և ձեռագիր գրքերում՝ մանրանկարչության մեջ, հիրավի, «Նռան գույնը»

ֆիլմում դառնում է այդ ամենն ագուցող, կապող օղակ:

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Երևանի կինոյի տան դիմացի պուրակն Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի անվամբ անվանակոչելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ